

**Հայտեր Ներկայացնելու Հրավեր (ՀՆՀ)**  
**Հայաստանի Հանրապետություն**  
**Դատաիրավական Բարեփոխումներ Երկրորդ Ծրագիր**  
**Վարկի համար՝ 4265 AM**  
**ՀՆՀ անվանումը՝ Կահավորանք Երևանի մասնագիտացված դատարանների**  
**համար**  
**ՀՆՀ համար՝ JR2/G2/001**

1. Սույն Հայտեր Ներկայացնելու Հրավերը հաջորդում է սույն Ծրագրի համար հրապարակված Գնումների Ընդհանուր Ծանուցմանը, որը հրապարակվել էր *Development Business* պարբերականի no. 704 համարում 2007թ. հունիսի 16-ին:
2. Հայաստանի Հանրապետությունը ստացել է վարկ Միջազգային Զարգացման Ընկերակցությունից՝ Դատաիրավական Բարեփոխումներ Երկրորդ Ծրագրի ծախսերը հոգալու համար և մտադիր է այդ վարկի միջոցների մի մասը օգտագործել «Կահավորանք Երևանի մասնագիտացված դատարանների համար», պայմանագիր JR2/G2/001 ֆինանսավորելու համար: Նշված պայմանագիրը համաֆինանսավորվելու է նաև Հայաստանի Հանրապետության կողմից: Մրցութային գործընթացը կարգավորվելու է Համաշխարհային Բանկի կողմից սահմանված կարգով մրցույթներին մասնակցելու իրավասության կանոններով և ընթացակարգերով:
3. Դատաիրավական Բարեփոխումներ ԾԻԳ ՊՀ-ը սույնով հրավիրում է ներկայացնել փակ ծրարներով հայտեր՝ նման իրավասություն ունեցող և հայտեր ներկայացնելու համար որակավորման չափանիշներին բավարարող հայտատուների կողմից, հետևյալ ապրանքների մատակարարման առաջարկներ ներկայացնելու համար.
  - LOT 1-ով՝ դատավորի աթոռ (54); այցելուների աթոռ (260); դեկավարի սեղան (24); դիմադիր սեղան (24); կողադիր սեղան (24); գործառնական սեղան (19); 3 դարակով տումբա (150); սովորական սեղան (107); զգեստապահարան (24); գրապահարան (24); ապակե գրապահարան (49); բազկաթոռ (4); դատական քարտուղարի սեղան (18); դատական կողմերի սեղան (36); գործառնական աթոռ (144); քննարկումների սեղան (2)
  - LOT 2-ով՝ դատավորի փոքր սեղան (16); դատավորի մեծ սեղան (2); 3 տեղանոց նստարան (25); 4 տեղանոց նստարան (90); 5 տեղանոց նստարան (15); դատական դահլիճի ջրբաժան (26); վկայի ամբիոն (18)
4. Մրցույթը կազմակերպվում է Միջազգային Մրցակցային Հայտեր ներկայացնելու (ICB) ընթացակարգերով՝ Համաշխարհային Բանկի կողմից սահմանված *Ուղեցույցներ, ԶՎՄԲ փոխառություններ և ՄՁԸ վարկեր (2004 թվականի Մայիս ամսվա խմբագրությամբ ընդունված, 2006 թվականի հոկտեմբեր ամսվա փոփոխություններով)*, և բաց է նշված Ուղեցույցներով սահմանված աղբյուր հանդիսացող իրավասու երկրների ծագում ունեցող բոլոր հայտատուների համար:
5. Հետաքրքրված և իրավասու հայտատուները կարող են լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերել Դատաիրավական Բարեփոխումներ ԾԻԳ ՊՀ-ից ([jrpui@arminco.com](mailto:jrpui@arminco.com)) և տեղեկանալ մրցութային փաստաթղթերի բովանդակությանը ստորև նշված հասցեով ժամը 09:00-ից 18:00-ը (Երևանի տեղական ժամանակով):
6. Որակավորման պահանջները ներառում են.
  - Ֆինանսական միջոցների առկայություն պայմանագիրը կատարելու համար՝ (ա) պարտավորություններից ազատ ֆինանսական միջոցներ (կանխիկ գումար կամ մնացորդ բանկային հաշիվներին) առնվազն առաջարկվող մրցութային արժեքի հիսուն տոկոսի չափով, և (բ) գրանցման երկրում ընթացիկ բանկային հաշիվները

սպասարկող առևտրային բանկում կայուն ֆինանսական դրություն ունենալու փաստի առկայություն:

- Փորձ և Տեխնիկական Հնարավորություններ՝ (ա) 2006-2007 թվականների ընթացքում նմանատիպ ապրանքների առնվազն երկու պայամանագրերի հաջող իրականացում: Ընդ որում, յուրաքանչյուր հաջող իրականացված պայամանագրի արժեքը պետք է լինի ոչ պակաս, քան մրցութային առաջարկի արժեքն է, (բ) ISO 9001:2000 վավեր հավաստագրերի առկայություն Լոտ 1-ով նշված բոլոր ապրանքների արտադրողների նկատմամբ; (գ) Արտադրողի կողմից տրված լիազորությունների հավաստագրի առկայություն: Ներքին շուկայում արտադրվող որոշակի ապրանքների նկատմամբ գնային արտոնության գործակից շնորհելու պայման չի կիրառվելու: Լրացուցիչ մանրամասներ տրված են մրցութային փաստաթղթերում:

7. Մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթի օրինակը անգլերեն լեզվով հետաքրքրություն ունեցող հայտատուները կարող են գնել ստորև նշված հասցեով գրավոր դիմում ներկայացնելու պարագայում և 45,000 ՀՀ դրամի չափով կամ դրան համարժեք ԱՄՆ դոլարով չփոխհատուցվող գումար վճարելուց հետո: Վճարման եղանակը պետք է լինի Էյչ-Էս-Բի-Սի Հայաստան Բանկ-ում թիվ 001-124346-003բանկային հաշվի օգտին գումարի դեպոնացում: Մրցութային փաստաթղթերը կառաքվեն օդային փոստով օտարերկրյա առաքումների պարագայում և ցամաքային եղանակով տեղական առաքումների դեպքում:

8. Հայտերը պետք է առաքվեն ստորև նշված հասցեով մինչև 2008թ. մարտի 05-ի ժամը 15:00-ը: Էլեկտրոնային եղանակով մրցակցային հայտեր ներկայացնել չի թույլատրվում: Ուշացված հայտերը մերժվելու են: Հայտերը բացվելու են մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների իրավասու ներկայացուցիչների ներկայությամբ ստորև նշված հասցեով 2008թ. մարտի 05-ի ժամը 15:00-ին: Բոլոր հայտերի հետ պետք է կցվի նաև Հայտերի Ապահովման միջոց 3,000,000 ՀՀ դրամի կամ դրան համարժեքը ազատ փոխարկելի այլ արժույթով:

9. Վերևում հղումներ պարունակող հասցեն է.

***Ղատախրավական Բարեփոխումներ ԾԻԳ ՊՀ  
Հայաստան, 0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 3  
Տնօրեն՝ պարոն Արթուր Թունյանին***